

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2016

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2015 թվականի գործունեության

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) էներգետիկայի (էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգեր), հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի, տնտեսական մրցակցության պաշտպանության, փոստային կապի, տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների սահմանման և վերանայման մասով) բնագավառներում և ջրային ոլորտում (խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարում, ջրահեռացում և կեղտաջրերի մաքրում) կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Փոստային կապի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքով և այլ օրենքներով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հանձնաժողովը 2015 թվականին գործել է հետևյալ կազմով՝

Լևոն Մնացականյան՝ Հանձնաժողովի նախագահ,
Միքայել Վիրաբյան՝ Հանձնաժողովի նախագահի տեղակալ,
Գագիկ Խաչատրյան՝ Հանձնաժողովի անդամ,
Լիանա Ավանեսյան՝ Հանձնաժողովի անդամ,
Մարինա Սարգսյան՝ Հանձնաժողովի անդամ:

ՀԱՄԱՌՈՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով, որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները՝

- հանրային ծառայությունների կարգավորման բաժին,
- տնտեսական մրցակցության պաշտպանության բաժին,
- հեռուստատեսության, ռադիոյի և հեռահաղորդակցության բաժին,
- ֆինանսատնտեսագիտական և վերահսկողության բաժին,
- իրավաբանական և վարչական վարույթի բաժին,
- արտաքին կապերի բաժին,
- ընդհանուր բաժին:

2015 թվականի ընթացքում (այսուհետ՝ նաև հաշվետու ժամանակաընթացք) տեղի է ունեցել Հանձնաժողովի 15 նիստ: Ընդունվել է 73 որոշում՝ 6 նորմատիվ և 67 անհատական:

Հանձնաժողովի աշխատակազմում շրջանառվել է 1413 գրություն:

Հանձնաժողովի աշխատակիցների կողմից իրականացվել է 21 գործուղում, որից 6-ը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններ, 14-ը՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան հանձնաժողովներ, 1-ը՝ արտերկիր (Գերմանիայի Նյուրնբերգ քաղաք):

Աշխատակազմի 5 աշխատակից մասնակցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության և Հայաստանի ամերիկյան համալսարանի շարունակական ծրագրի համագործակցության շրջանակում կազմակերպված դասընթացներին, մեկ աշխատակից մասնակցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից կազմակերպված սեմինար-դասընթացին:

Հանձնաժողովը հետևողական աշխատանքներ է կատարել իր գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման ուղղությամբ:

Հանձնաժողովի նիստերը լուսաբանվել են Արցախի հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով, «Ազատ Արցախ» և «Ստեփանակերտ» թերթերով, «karabakh-open.info», «karabakh-life.am», «artsakhpress.am» էլեկտրոնային կայքերում, ինչպես նաև Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հարցազրույցներ են տրվել հայաստանյան tert.am, iravunq.am, azatutyun.am, hrparak.am լրատվամիջոցներին:

Հանձնաժողովի գործունեությունը լուսաբանվել է Հանձնաժողովի պաշտոնական www.kargavorum.nkr.am կայքում և www.facebook.com սոցիալական ցանցում գործող Հանձնաժողովի պաշտոնական էջում:

2015 թվականի ընթացքում կայքն ունեցել է 5584 այցելություն (2389 այցելու), այդ թվում 4425-ը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից և Հայաստանի Հանրապետությունից, 312-ը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, 153-ը՝ Ադրբեջանից, 97-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից, 37-ը՝ Չինաստանից, 24-ը՝ Գերմանիայի Դաշնությունից, 536-ը՝ այլ երկրներից:

Օրենքով սահմանված կարգով Հանձնաժողովը հրապարակել է 2014 թվականի գործունեության հաշվետվությունը մամուլում և 2016 թվականի գործունեության ծրագիրը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովում:

ԿԱՐԳԱՎՈՐՍԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հանրային ծառայությունների ոլորտում 2015 թվականին շարունակվել են կարգավորման իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Էներգետիկայի բնագավառում հաշվետու ժամանակաընթացքում իրականացվել են էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց («Արցախէներգո», «Արցախգազ», «Պրոտոն», «Ալֆամագ», «Մեգատոն», «Ջերմային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերություններ, «Արցախ ՅԷԿ» բաց բաժնետիրական ընկերություն, «Իզոտոպ Դելտա», «Ջուր-Էներգիա», «Լեվ Էներջի», «Վիսավտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ) ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունների վերլուծություն, լիցենզավորված գործունեության իրականացման պայմանների վերահսկում, սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունների ամփոփում:

Հաշվետու ժամանակաընթացքում տրամադրվել է 8 լիցենզիա՝

- «Ջուր-Էներգիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Հոչանց» փոքր հիդրոէլեկտրակայանի **կառուցման**, էլեկտրական էներգիայի (հզորության) **արտադրության** համար,

- «ԼԵՎ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ԼԵՎ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի **կառուցման** համար,

- «Սեգատոն» փակ բաժնետիրական ընկերությանը «Եղեգնուտ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման, էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության համար,
- «Իմաստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՀԱԿ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության համար,
- «Արցախ ՅԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը «Թրդի-3» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության համար,
- «Վիսավտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ջերմաջուր» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման համար:

Վերանայվել են «Արցախ ՅԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կողմից առաքվող էլեկտրական էներգիայի, «Արցախէներգո» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագները:

Սահմանվել են մի շարք փոքր ՅԷԿ-երից («Սյունիք-1», «Սյունիք-2», «Սյունիք-3», «Սյունիք-4», «ՀԱԿ», «Հոչանց», «Եղեգնուտ») առաքվող էլեկտրական էներգիայի սակագները, ինչպես նաև «Արցախէներգո» փակ բաժնետիրական ընկերության կողմից 110 կՎ լարմամբ սնվող սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագինը:

Ջրային համակարգի ոլորտում հաշվետու ժամանակաընթացքում կատարվել են փոփոխություններ «Ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարման գրաֆիկում, երկարաձգվել է «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության ջրային համակարգի օգտագործման թույլտվության գործողության ժամկետը՝ մինչև 2018 թվականի հոկտեմբերի 4-ը, ինչպես նաև ընդլայնվել է «Ջրամատակարարում և ջրահեռացում» փակ բաժնետիրական ընկերության գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը՝ համալրվելով՝

ա) Ասկերանի շրջանում (Ասկերան քաղաքի և Խնապատ, Խաչեն, Խնձրիստան, Խրամորթ, Ակնաղբյուր, Ներքին Սզնեք, Խաչնաչ, Կարմիր Գյուղ, Սարուշեն, Ջրաղացներ, Մոշխմիատ, Իվանյան, Բերքաձոր, Նորագյուղ, Նախիջևանիկ, Վարդաձոր, Մաղաթաշեն, Ավետարանոց և Հարավ համայնքների տարածքներ) Հիլիս և Սարդարաշեն համայնքների տարածքներով,

բ) Մարտունու շրջանում (Մարտունի, Ճարտար քաղաքների, Խնուշինակ, Սոս, Քարահունջ, Բերդաշեն, Նոր Շեն, Եմիշճան, Աշան, Վազգենաշեն, Թաղավարդ, Կաղարծի, Շեխեր, Հերիեր, Սպիտակաշեն, Մաճկալաշեն, Քերթ, Կարմիր Շուկա և Սարգսաշեն համայնքների տարածքներ)՝ Կոլխոզաշեն և Հաղորտի համայնքների տարածքներով,

գ) Մարտակերտի շրջանում (Մարտակերտ քաղաքի և Մեծ Շեն, Մաղավուզ, Թալիշ, Մատաղիս, Նոր Մարաղա, Վարնկաթաղ և Գետավան համայնքների տարածքներ) Աղաբեկալանջ և Մոխրաթաղ համայնքների տարածքներով,

դ) Հաղորտի շրջանում (Հաղորտ քաղաքի և Ջրակուս, Մեծ Թաղլար, Ազոխ, Դրախտիկ, Հարթաշեն, Նորաշեն և Ակնաղբյուր համայնքների տարածքներ) Տող և Թաղուտ համայնքների տարածքներով,

ե) Շուշիի շրջանում (Շուշի քաղաք)՝ Քարին տակ համայնքի տարածքով:

Կատարվել են ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող անձանց կողմից («Ջրմուղ-կոյուղի», «Ջրային տնտեսություն», «Մարտակերտի ջրային տնտեսություն» և «Ջրամատակարարում և ջրահեռացում» փակ բաժնետիրական ընկերություններ) ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների, տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունների, ինչպես նաև «Ջրմուղ-կոյուղի» և «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությունների ծառայությունների մատուցման որակի ցուցանիշների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունների վերլուծություն, ջրային համակարգի օգտագործման թույլտվությունների պայմանների վերահսկում:

Բացի նշվածից զգալի աշխատանքներ են տարվել նաև սպառող-բաժանորդ հարաբերություններում ծագած տարածայնությունների ուսումնասիրման և լուծման ուղղությամբ:

Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման և փոստային կապի բնագավառներում կատարվել է «Տեխնոսերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Արցախփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն:

Հեռահաղորդակցության, այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում հաշվետու ժամանակաընթացքում իրականացվել են զգալի աշխատանքներ:

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տրամադրվել է ռադիոհաճախականության օգտագործման 2 թույլտվություն, դադարեցվել է ռադիոհաճախականության օգտագործման 4 թույլտվության գործողություն, ինչպես նաև փոփոխություններ են կատարվել ռադիոհաճախականության օգտագործման 4 թույլտվության պայմաններում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ռադիոհաճախականությունների կառավարման համակարգող հանձնաժողովի նիստին, որը կազմակերպվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից, քննարկվել և վերանայվել են 2007 թվականից Հանձնաժողովի կարգավորման տակ գտնվող ռադիոհաճախականությունների հատվածները:

Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին համապատասխան անցկացվել է հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման (վերահեռարձակման) լիցենզավորման 9 մրցույթ, որոնց արդյունքում լիցենզիաներ են տրամադրվել հետևյալ ընկերություններին՝

- «Արցախկապ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ **հեռուստածրագրերի և ռադիոհաղորդումների** եթերային հեռարձակման (վերահեռարձակման) համար.

- «Ռադիո Ավրորա ԷՖ Էմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ **ռադիոհաղորդումների** եթերային հեռարձակման (վերահեռարձակման) համար.

«Ռադիո Ավրորա ԷՖ ԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 100.7 ՄՀց հաճախականությամբ պայմանագրային հիմունքներով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում վերահեռարձակում է Հայաստանի Հանրապետության «Ռադիո Ավրորա» ընկերության ռադիոծրագրերը:

- «Միքս Սեդիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ **ռադիոհաղորդումների** եթերային հեռարձակման համար.

- «Ռադիո Հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ **ռադիոհաղորդումների** եթերային հեռարձակման (վերահեռարձակման) համար.

- «Ռադիո-FM103» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ **ռադիոհաղորդումների** եթերային հեռարձակման համար.

- «Փեյս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ **ռադիոհաղորդումների** եթերային հեռարձակման համար.

- «Սիթի ԷՖ-Էմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ **ռադիոհաղորդումների** եթերային հեռարձակման (վերահեռարձակման) համար.

Հարկ է նշել, որ «Միքս Սեդիա», «Ռադիո-FM103», «Փեյս» և «Սիթի ԷՖ-Էմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները լիցենզավորվել են դեռևս 2009 թվականին և, կրկին հաղթող ճանաչվելով, շարունակելու են իրենց զբաղեցրած ռադիոհաճախականություններով իրականացնել ռադիոհաղորդումների եթերային հեռարձակման (վերահեռարձակման) գործունեություն:

- «Ջան Քոնյունիքեյշըն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ **հեռուստածրագրերի կարելային (լարային)** հեռարձակման (վերահեռարձակման) համար.

«Ջան Քոնյունիքեյշըն» փակ բաժնետիրական ընկերությունը, պայմանագրային հիմունքներով համագործակցելով ավանդորեն գերիշխող օպերատորի հետ և օգտագործելով վերջինիս ենթակառուցվածքները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում առաջին անգամ կմատուցի մալուխային և ինտերակտիվ

հեռուստատեսության ծառայություններ, դրանով իսկ ընդլայնելով երկու բնագավառներում տրամադրվող ծառայությունների ցանկը:

Իրականացվել են լիցենզավորված ռադիոընկերությունների եթերների ընտրանքային դիտարկում և դիտարկման արդյունքների համադրում ռադիոընկերությունների կողմից յուրաքանչյուր ամիս ներկայացվող ռադիոհաղորդումների գրանցամատյանների տվյալների հետ: Այս աշխատանքները շարունակական բնույթ ունեն և թույլ են տալիս ստուգել ռադիոընկերությունների եթերների համապատասխանությունը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին:

Վերանայվել են «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մատուցվող անրակցված և շարժական կապի ցանցերից դեպի 10 երկրներ կատարվող միջազգային զանգերի սակագները: Սակագների վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված էր «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ծառայությունների մատուցման ծախսերի աճով, որն էլ իր հերթին պայմանավորված էր դրամ-դոլար փոխարժեքների տատանման հետևանքով միջօպերատորային սակագների շարունակական բարձրացմամբ:

Միջազգային զանգերի սակագները ներկայացվել են նոր տեսքով՝ առանց կապի տեսակների տարանջատման: Հաշվի է առնվել այն հանգամանքը, որ տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ ինտերնետ կապով զանգերի որակի զգալի բարելավման արդյունքում ինտերնետ և սովորական կապերի որակական տարբերություն այլևս չկա, ինչպես նաև այն, որ ինտերնետ կապով իրականացվող զանգերի համար սահմանված էին սովորական կապով իրականացվող զանգերի համեմատ առավել ցածր սակագներ: Այսուհետ միջազգային զանգերի համար գործում է սակագների մեկ և առավել մատչելի տարբերակ:

Աշխատանքներ են կատարվել դեպի կարճ համարներ կատարվող զանգերի սակագների կարգավորման գործընթացի հստակեցման ուղղությամբ: Կարճ համարով ավելացված արժեքով ծառայությունները ներառում են տարբեր ոլորտներում մատուցվող տեղեկատվական ծառայություններ և մատուցվում են ոչ թե ավանդորեն գերիշխող օպերատորի, այլ երրորդ կազմակերպության կողմից՝ օգտագործելով բջջային օպերատորի ցանցի կարճ համարները, և հետևաբար չեն կարող համարվել առաջին անհրաժեշտության ծառայություններ, ուստի նշված ծառայությունների սակագները կկարգավորվեն ոչ թե Հանձնաժողովի, այլ ավանդորեն գերիշխող օպերատորի և տվյալ կարճ համարով ավելացված արժեքով ծառայություններ մատուցող կազմակերպության միջև՝ պայմանագրային հիմունքներով:

Հաշվետու ժամանակաընթացքում իրականացվել են ավանդորեն գերիշխող օպերատորի կողմից ներկայացված սակագների վերանայման հայտերի ուսումնասիրություններ, մի շարք վերլուծություններ ինտերնետ ծառայության միացման վարձի սահմանման մասով, որոնց արդյունքում ներկայացված բոլոր հայտերը մերժվել են՝ համաձայն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթների:

Կատարվել են հանրային շարժական բջջային կապի, տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունների վերլուծություններ:

Իրականացվել են նաև «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից հայտարարված մի շարք հրապարակային օֆերտաների ուսումնասիրություններ և համաձայնությունների տրամադրում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների հետ կապված 2015 թվականի մարտի 31-ից մինչև մայիսի 3-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է վերահսկողություն վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող 2 հեռուստաընկերությունների և 2 ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի կատարման նկատմամբ: Նշված ժամանակահատվածում անմիջական դիտարկման է ենթարկվել հեռուստա-

ռադիոհաղորդումների և դրանց տեսազրույթությունների (ձայնագրությունների) 1595 եթերա-
ժամ, որի հիման վրա համապատասխան կառույցներին ներկայացվել է եզրակացություն:

Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում 2015 թվականի
ընթացքում իրականացվել են մի շարք աշխատանքներ առաջին անհրաժեշտության
ապրանքների մանրածախ գների մոնիթորինգների, գնագոյացման ուսումնասիրու-
թյունների, մանրածախ գների հրապարակման, անբարեխիղճ մրցակցության դեպքերի
բացահայտման, ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրության,
մենաշնորհի ու գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից
ներկայացված տեղեկատվությունների վերլուծության ուղղությամբ:

Մանրածախ գների մոնիթորինգ.

Գների դիտանցումը հանդիսանում է Հանձնաժողովի կողմից ապրանքային
շուկաներում գների փոփոխությանը հետևելու, ապրանքային շուկաներում գերիշխող
դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից հնարավոր խախտումների, ինչպես
նաև հնարավոր հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման և
կանխարգելման միջոցներից մեկը: Առաջին անհրաժեշտության ապրանքների գների
մշտական դիտանցումը հնարավորություն է ստեղծում որոշակիորեն զսպելու գների
արհեստական բարձրացման միտումները, ինչպես նաև կանխելու գերիշխող դիրք
ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից չհիմնավորված գների սահմանումը:

Հաշվետու ժամանակաընթացքում Ստեփանակերտ քաղաքում իրականացվել է
պարենային և ոչ պարենային 37 ապրանքային շուկաների 73 ապրանքատեսակների
մանրածախ գների 39 մոնիթորինգ 28 առևտրային օբյեկտներում, և կատարվել դրանց
արդյունքների վերլուծություն: Մոնիթորինգների արդյունքների համաձայն 73 ապրանքա-
տեսակներից 40 ապրանքատեսակների միջին գները նվազել են, 24-ինը՝ աճել, իսկ
9-ինը՝ մնացել անփոփոխ:

Առավել մեծ (5%-ից բարձր) գնանկում է արձանագրվել «Սոխ», «Հնդկաձավար»,
«Վարունգ», «Պանիր», «Շաքար», «Շաքարավազ», «Տեղական պանիր», «Հավի ձու»,
«Ձեթ», «Կարագ», «Կարտոֆիլ», «Ալյուր», «Խոզի միս», «Մարգարին», «Բրինձ (սպիտակ
երկարահատիկ)», «Բենզին», «Դիզվառելիք» ապրանքային շուկաներում:

«Հաց (մատնաքաշ)», «Կաթ», «Թթվասեր (Արցախ կաթ)», «Մածուն (Արցախ կաթ)»,
«Ձուկ», «Լիմոն», «Խնձոր» ապրանքատեսակների գները մնացել են անփոփոխ:

Առավել մեծ (5%-ից բարձր) գնաճ է արձանագրվել «Օղի», «Երշիկ», «Սուրճ»,
«Ոչխարի միս», «Կենդանական յուղ («Լուսաստղ»)», «Հյութ («Կոկա-Կոլա»)», «Սպրեդ»,
«Թեյ» և «Ադամաթուզ» ապրանքային շուկաներում:

Նշված ժամանակահատվածում առավել մեծ գնաճ արձանագրած ապրանքային
շուկաներում գերիշխող համարվող տնտեսավարող սուբյեկտների գնային
քաղաքականության ուսումնասիրության արդյունքում գերիշխող դիրքի չարաշահման
դեպքեր չեն հայտնաբերվել:

Ընդհանուր առմամբ 2015 թվականի ընթացքում ուսումնասիրված 73 ապրանքա-
տեսակների մասով արձանագրվել է 3.0% գնանկում:

Գնագոյացման ուսումնասիրություններ.

2014 թվականի դեկտեմբեր ամսին իրականացված մոնիթորինգների արդյունքում
արձանագրվել էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված առաջին
անհրաժեշտության մի շարք ապրանքատեսակների գնաճ: Առավել մեծ գնաճ է
արձանագրվել մանրածախ առևտրի ոլորտում գերիշխող դիրք ունեցող մի շարք
ընկերություններին պատկանող առևտրային ցանցերում: Այդ կապակցությամբ 2015
թվականի առաջին եռամսյակում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում
պարզվել է, որ ապրանքների գնագոյացումը պայմանավորված է եղել Հայաստանի
Հանրապետությունում տեղի ունեցած գնաճով: Դրան-դուր փոխարժեքների և իրացման
գների դինամիկաների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ընկերությունների

կողմից մանրածախ առևտրի ոլորտում իրականացված գնաճը համապատասխանում է դոլարի փոխարժեքի փոփոխությանը:

Նշված ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից իրականացված գնագոյացման ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ դրամի արժեզրկման հետ է կապված նաև «Հավի միս», «Մակարոն», «Սեղմված գազ» ապրանքային շուկաներում տեղի ունեցած գնաճը:

2015 թվականի ընթացքում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների կողմից իրականացված բոլոր թանկացումները Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են և գերիշխող դիրքի չարաշահումներ չեն հայտաբերվել:

Մանրածախ գների հրապարակում.

2015 թվականին նախաձեռնվել և իրականացվել է Ստեփանակերտ քաղաքում համեմատաբար էժան և մեծ պահանջարկ ունեցող 10 խանութներում գործող՝ ռազմավարական նշանակության 20 ապրանքատեսակների, այդ թվում հաց, ալյուր, աղ, մակարոնեղեն, հնդկաձավար, բրինձ, ոսպ, շաքար, շաքարավազ, հավի ձու, ձեթ, կարագ, կաթնամթերք և այլն, մանրածախ գների վերաբերյալ տեղեկությունների հրապարակում Հանձնաժողովի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում: Սա նախադեպը չունեցող ծրագիր է, որը հնարավորություն է տալիս սպառողին ավելի հեշտ կողմնորոշվելու շահավետ գնումներ իրականացնելու համար և խրախուսում է մրցակցությունը մանրածախ առևտրի ոլորտում:

Ծրագրի իրականացման նպատակով կազմակերպվել են բաց քննարկումներ այն սուբյեկտների ներկայացուցիչների մասնակցությամբ, որոնց պատկանող խանութներում առկա նշված 20 ապրանքատեսակների գները պարբերաբար հրապարակվում են, դրանք են՝ «Սևան», «Ղավ Գրուպ», «Հաղթանակ», «Կարս», «Հարութ», «Օլեան», «Գրանդ քրեյդ», «Տեխնոթրայդ», «Մերկուրի» սահմանափակ պատասխանատվությամբ և «Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերությունները: Նշված ընկերություններին պատկանող խանութներն ընտրվել են՝ հաշվի առնելով իրենց կողմից կիրառվող գնային տարբեր քաղաքականությունները, սպառողների քանակը, տեղակայվածությունը և հարմարավետությունը, ինչպես նաև սպասարկման որակը:

Նշված ծրագրի իրականացումը տնային տնտեսությունների համար նպաստում է ֆինանսական միջոցների տնտեսմանը, իսկ մանրածախ առևտրի ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների համար՝ գնային ճիշտ քաղաքականություն որդեգրելու դեպքում՝ սպառողների քանակի ավելացմանը և արդյունքում ռազմավարական նշանակության ապրանքատեսակների գների իջեցմանը, որը ծրագրի կարևոր նպատակն է հանդիսանում:

Անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտում.

Շարունակվել են աշխատանքները անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման, դրանց դադարեցման և հետագայում բացառելու ուղղությամբ, մասնավորապես՝ 2015 թվականին Ստեփանակերտ քաղաքում իրականացվել է անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման նպատակով 39 դիտանցում: Դիտանցումների ընթացքում հատկապես մեծ ուշադրություն է դարձվել հաց արտադրող ընկերությունների կողմից խանութներում համապատասխան տեղեկատվական թերթերի առկայության և դրանց համապատասխանության վերաբերյալ: Մասնավորապես ստուգվել են հացի քաշի համապատասխանությունը տեղեկատվական թերթերում առկա տեղեկությունների հետ:

Ուշադրության կենտրոնում են եղել նաև զեղչեր իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին պատկանող խանութներում զեղչված ապրանքատեսակների գների և մատնանշվող զեղչի համապատասխանության իսկությունը: Որոշ առևտրային օբյեկտների կողմից իրականացված զեղչային քաղաքականությունը մոլորեցնում էր հասարակությանը, մասնավորապես մոլորեցման հանգամանքն առկա էր այն դեպքում, երբ առևտրային օբյեկտները մատնանշում են իրենց կողմից իրացվող ապրանքների զեղչերը, սակայն այդ զեղչերը չեն տարածվում բոլոր ապրանքների վրա:

Համապատասխան տնտեսավարող սուբյեկտները զգուշացվել են և կարճ ժամկետում վերացրել հայտնաբերված թերությունները:

Ուսումնասիրվել է նաև «Փեյս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից թողարկվող գովազդը «Ուբունտու» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից մատուցվող համակարգչային ծառայության՝ 2005 կարճ համարով անվճար խորհրդատվության վերաբերյալ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ թողարկվող գովազդը համապատասխանում է իրականությանը և չի համարվում անբարեխիղճ մրցակցություն մասնավորապես հասարակության մոլորեցում:

Հաշվետու ժամանակաընթացքում Ստեփանակերտ քաղաքի մի շարք խանութներում կատարված դիտանցումների արդյունքում հայտնաբերվել է «Լավա» ապրանքային նշանով սպասք լվանալու միջոց, որի վրա առկա է պահպանման ժամկետի մասին տեղեկություն, սակայն բացակայում է արտադրության ժամկետը: Իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ապրանքատեսակը ձեռք է բերվել «ՄՎ ՔԵՄԻՔԼ ԳՐՈՒՊ» Հ/Զ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից, որը նաև հանդիսանում է նշված ապրանքատեսակի արտադրողը: Այսինքն՝ օրենքի խախտմամբ ապրանքատեսակի արտադրությունը և ներկրումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն իրականացվել է «ՄՎ ՔԵՄԻՔԼ ԳՐՈՒՊ» Հ/Զ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ: Հանձնաժողովը դիմել է Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին՝ հարցն ուսումնասիրելու նպատակով:

2015 թվականին Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովից ստացված տեղեկատվության հիման վրա իրականացված աշխատանքների արդյունքում կանխվել է Հայաստանի Հանրապետությունից ներմուծված կեղծ «Calgon» (Կալգոն) ապրանքային նշանով ջրի փափկեցուցիչ փոշու և «Fairy» (Ֆեյրի) ապրանքային նշանով սպասք լվանալու միջոցի իրացումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում:

Ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություն.

Հաշվետու ժամանակահատվածում նախաձեռնվել է «Հնդկաձավար», «Կարագ», «Շաքարավազ», «Ոսպ», «Բրինձ» և «Ձեթ» ապրանքային շուկաների ուսումնասիրություն: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության և նշված ապրանքային շուկաներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կողմից տրամադրված տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Հնդկաձավար», «Կարագ», «Ոսպ» և «Բրինձ» ապրանքային շուկաներն ունեն ցածր, իսկ «Շաքարավազ» ապրանքային շուկան՝ միջին կենտրոնացվածության աստիճան: Բազմաթիվ սուբյեկտների առկայությամբ պայմանավորված՝ նշված ռազմավարական շուկաներում բացակայում են գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտները, ինչը կատարյալ մրցակցային պայմաններ է ստեղծում:

«Ձեթ» ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքում «Ռեյփսիդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ որպես ձեռք բերող, ձեռքբերման ծավալներով գրավելով տվյալ շուկայի մեկ չորրորդից ավելին՝ 48.8%-ը, համարվել է գերիշխող դիրք ունեցող:

Իրականացվել է 6 ապրանքային շուկաներում 5 մենաշնորհ դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների և 47 ապրանքային շուկաներում 27 գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից վեցամսյա պարբերականությամբ Հանձնաժողով ներկայացվող տեղեկատվությունների ուսումնասիրություն, որի արդյունքում պարզվել է, որ մի շարք ապրանքային շուկաներում տեղի է ունեցել իրացման ծավալների փոփոխություն, որն էլ առավել մեծ ուշադրության հիմք կհանդիսանա հետագա ուսումնասիրությունների ժամանակ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2015 թվականին շարունակվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի հետ հուշագրերով, համաձայնագրերով և համատեղ աշխատանքային ծրագրերով ամրագրված աշխատանքային հարաբերությունները, ստանձնած պարտավորությունների կատարման արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքները՝ մեծապես ուշադրություն դարձնելով օրենսդրական դաշտի ներդաշնակեցմանը, փորձի փոխանակմանը, միջազգային համագործակցության ոլորտում ընդհանուր շահերի պահպանմանը, միջազգային փորձի տեղայնացմանը և համատեղ ռազմավարական ծրագրերի մշակմանը:

2015 թվականի հունիսին Ծաղկաձոր քաղաքում Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից Միջազգային համագործակցության գերմանական ընկերակցության (ԳՄՀ/ԳԻՀ) աջակցությամբ կազմակերպված «Մրցակցային խնդիրները զբոսաշրջության ոլորտում» թեմայով կլոր սեղան ձևաչափով քննարկումներին: Քննարկումները ծավալվել են հյուրանոցային ծառայությունների մատուցման և գովազդման ոլորտում իրականացված ուսումնասիրությունների, զբոսաշրջության ոլորտում առկա հիմնախնդիրների, մրցակցային օրենսդրության հնարավոր խախտումների և անբարեխիղճ մրցակցության դրսևորումների վերաբերյալ հարցերի շուրջ:

2015 թվականի հուլիսին Հանձնաժողովի աշխատակիցները Երևան քաղաքում մասնակցել են Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից Լոնդոնի հաղորդակցման միջազգային ինստիտուտի աջակցությամբ կազմակերպված «Թվային հաղորդակցում և ինտերնետի ազդեցությունը» միջազգային մեդիա-ֆորումին: Միաժամանակ անցկացվել են աշխատանքային քննարկումներ ցանցերի միջև թրաֆիկի փոխանակման ոլորտում ինտերնետ-կապավորների տեխնիկական փոխգործակցության (պիրինգի) վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մասնագետների հետ:

2015 թվականի հոկտեմբերին կայացել է համատեղ նիստ Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի հետ և ստորագրվել է համատեղ աշխատանքային ծրագիր:

2015 թվականի հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 1-ը Հանձնաժողովի նախագահը Գերմանիայի Նյուրնբերգ քաղաքում մասնակցել է Հեռուստառադիոհեռարձակման ոլորտը կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի (EPRA) տարեկան համաժողովին:

2015 թվականի նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում Հանձնաժողովի աշխատակիցները Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից իրականացվող աշխատանքներին օժանդակելու նպատակով մասնակցություն են ցուցաբերել Հայաստանի Հանրապետության Սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի քարոզարշավի անմիջական մշտադիտարկումներին և ստացված տվյալների վերլուծական աշխատանքներին:

Հանձնաժողովն ակտիվ համագործակցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության, էկոնոմիկայի, ֆինանսների նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների հետ:

Հանձնաժողովը, կարևորելով ազատ մրցակցային միջավայրի ստեղծման և սպառողների շահերի պաշտպանության գործում հասարակության, այդ թվում կարգավորվող անձանց, սպառողների, տնտեսավարող սուբյեկտների ներգրավվածու-

թյան դերը, մեծապես ուշադրության կենտրոնում է պահել նաև հասարակության հետ համագործակցությունը՝ արձագանքելով Հանձնաժողովի թե՛ զԺ միջոցով ստացվող տեղեկություններին և առաջադրվող խնդիրներին, կազմակերպելով հանդիպումներ, քննարկումներ հասարակության իրազեկվածության, կարգավորմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացման նպատակով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից հաշվառման է վերցվել 9 նոր սուբյեկտ, տրամադրվել է 17 լիցենզիա և ռադիոհաճախականության օգտագործման 2 թույլտվություն:

2015 թվականի ընթացքում պետական բյուջե է մուտքագրվել **438364.8** հազ. դրամ, այդ թվում՝ **հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ՝ 151303.4** հազ.դրամ, որից **1713.4** հազ. դրամ տույժ, **պետական տուրք՝ 20446.4** հազ. դրամ, **ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարներ՝ 266615.0** հազ. դրամ, որից **20.1** հազ. դրամ տույժ:

**ԼԵՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱԲՎՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ